ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -	011401.00.6 «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ -	011401.09.6 «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ-	ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
3. Շնորհվող որակավորումը	Մանկավարժի որակավորում
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	Հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2018-2022թթ.

8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումե մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կրթության վկայական և հաջողությամբ հանձնած լինի ընդունելության քննությունները «Ընդհանուր ֆիզիկական պատրաստությունե և «Մարդակազմություն և ֆիզիոլոգիաե առարկաներից, որոնցից վերջինը հանձնում են այն դիմորդները, ովքեր մրցակցում են ուսուցման անվճար համակարգում ուսումնառելու համար:

9. Կրթական ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակաուղղված է ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, մասսայական և պրոֆեսիոնալ սպորտի բնագավառում, ինչպես նաև բնակչության առողջության և հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքային գործունեության համար:

Ծրագրի նպատակներն են՝

- նպաստել մարդու ֆիզիկական, հոգեկան, ֆունկցիոնալ հնարավորությունների բացահայտմանը և կատարելագործմանը,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նպաստել կյանքի ակտիվ և առողջ ապրելակերպի սկզբունքների ներդրմանը և ամրապնդմանը, անձի ձևավորմանը,

10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները

- *<u>Գիտենա՝</u>*
  - ՀՀ Սահմանադրությունը, կրթության բնագավառի օրենդրությունը, կրթության և իր մասնագիտությանը վերաբերող նորմատիվ և իրավական ակտերը:
- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելակերպի կանոնները:
- Մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը:
- Անձի ձևավորման և զարգացման օրինաչափությունները:
- Երեխաների հիվանդությունների հիմնական նախանշանները:
- Կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակարդակները:
- Ուսումնական գործընթաց իրականացնելու տեխնոլոգիաները և մեթոդիկաները:

• Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման սկզբունքները:
• Ինքնուրույն ուսումնական և մեթոդական նյութեր մշակելու, մարզական պարապմունքները պլանավորելու, վերլուծելու, աշակերտների մեջ ուսումնական դրդապատճառներ առաջացնելու կարողություն:
• Ուսումնական գործընթացում առկա մեթոդական խնդիրները առանձնացնելու և առաջադրելու կարողություն:

Կարողանա՝

• Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
• կազմակերպել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով սովորողների անհատական, տարիքահոգեբանական առանձնահատկությունները:
• կայացնել արդարացի վճիռներ տարբեր իրավիճակներում,
• կիրառելով դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ,
• կիրառել գնահատման տարբեր ձևեր,
• հետևողականորեն կատարելագործել իր առարկայական մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները,
• կարողանա պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել դպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը,
• պլանավորել և իրականացնել մանկավարժական գիտափորձ, կատարել եզրահանգումներ, ընդհանրացնել ստացված փորձարարական արդյունքները, ներկայացնել ստացված արդյունքները:

Տիրապետի՝

• ուսուցման նորագույն մեթոդներին և հնարներին,
• ստուգման և գնահատման համակարգերին,
• մասնագիտական ոլորտի լեզվին (գրավոր և բանավոր) և երկու օտար լեզուներով հաղորդակցմանը,
• հոգեբանա-մանկավարժական ու մեթոդական խնդիրների լուծման մեթոդներին,
• Հետազոտությունների պլանավորման և կազմակերպման մեթոդներին:

11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը

Կցվում է

12. Գնահատման ձևերը

ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:
Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:
Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան,
- ինքնուրույն կատարվող աշխատանքներ,
- գործնական (սեմինար) և պրակտիկում (լաբորատոր) աշխատանքներին ուսանողի մասնակցություն,
- ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ կամ քննություններ:

13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

011401.09.6 «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումե մասնագիտության մանկավարժության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

համապատասխան ժամկետներում ստանալու բակալավրի որակավորման

աստիճան 2-րդ մասնագիտության գծով, մագիստրատուրայում՝ ստանալու <<ֆիզիկական կուլտուրա և սպորտ>> մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան, մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան:
14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը
Սույն կրթական ծրագրի համար հասանելի են ուսումնառության տարբեր ռեսուրսներ, որոնցից են դասընթացի ուսումնական ծրագրին համապատասխան ուսումնամեթոդական նյութերը՝ դասախոսությունների կոնսպեկտներ, առաջարկվող մասնագիտական գրականությունը, վերջիններիս էլեկտրոնային տարբերակները, գրադարանային ֆոնդը, ժամանակակից տեխնոլոգիական կաբինետները: Դասավանդման և ուսումնառության որակի վերահսկման արդյունավետության բարձրացման համար մի շարք կրթական մոդուլների համար կիրառվում է ուսումնառության, անհրաժեշտության դեպքում, Moodle և համալսարանի հեռավար ուսուցման հարթակները:
15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս
ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ(011401.09.6) մասնագիտությունը արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ն կողմից (Լիցենզիա 0025,2016թ.):